

XIX ԳԱՐԻ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԸ ԵՎ ՇԻՂԵՐԸ

Ա. Ս. ԲԱՐԱՅԱՆ

Մոտավոր և հեռավոր ժողովուրդների գրականությունների հետ հայ գրականության փոխազդեցություններն ու կապերը դալիս են խորը անցյալից: Սակայն հայ նոր գրականությունը զարգացել է գերազանցապես ուսումնական և եզրուպական գրականությունների միջնորդում, կրել է նրանց բարերար ազդեցությունը: Իսկ խոսք, որ այդ երևույթի հիմքում բնկած են ժողովուրդների պատմական զարգացման ընդհանուր օրինաչափությունները, որքան էլ որ այդ ժողովուրդներից յուրաքանչյուրը, այդ թվում և հայ ժողովուրդը, բնթացած լինի իր յուրահատուկ պատմական ուղիով:

Հայ նոր գրականության վրա ուսումնական և եզրուպական գրականությունների ազդեցությունը առանձնապես նկատելի է դառնում անցյալ դարի հիսունական թվականներից: Այդ շրջանում է, որ սկսում են մեծ ծավալ ստանալ եվրոպական և ուսումնական կլասիկ գրողների երկերի հայերեն թարգմանությունները, ստեղծվում է ժամանակակից հայ պրոֆեսիոնալ թատրոնը:

Գերմանական ժողովրդի հանճարեղ զավակ Ֆրիդրիխ Շիլլերը հայ ժողովրդի կողմից սիրված եվրոպական կլասիկ գրողներից է:

Հայ գրողները ոգեշնչվել են Շիլլերի երկերով, որոնք բարերար ազդեցություն են ունեցել հայ գրականության, ազգային դրամատուրգիայի ու թատրոնի զարգացման վրա, լայն արձագանք են գտել ժողովրդի մեջ:

1

Մեծ բանաստեղծը մուտք է գործել հայ գրականության մեջ իր մահվանից մոտավորապես 25 տարի հետո: Շիլլերի երկերի հայերեն առաջին թարգմանությունների պատիվը պատկանում է մեր մեծ լուսավորիչ և աշխատուր Արուստիսին, որը եղել է Շիլլերի երկրպագուներից, մեր իրականության մեջ նրա ազատասիրական գաղափարների առաջին տարածողներից և նրա տաղանդը բարձր գնահատողներից մեկը:

Ինչպես գիտենք, երբ 1830 թ. սեպտեմբերի 3-ին Արուստիսը հասավ Ինքուպա, նրա առաջին խնդիրը եղավ խորամուխ լինել գերմաներեն լեզվի մեջ, որին նա որոշ չափով ծանոթացել էր դեռևս ներսիսյան դպրոցում ուսանելիս: Եվ ահա կարճ ժամանակամիջոցում, ընդամենը ութ ամսով բնթացրում նա ուսումնասիրում և լիովին յուրացնում է գերմաներենը, գրում, խոսում է այդ լեզվով:

Արուստիսը բացի գերմաներենից, սովորում է նաև ֆրանսերենն ու լատիներենը: Շնորհիվ լեզուների իր այդ իմացության, Արուստիսը բնագրով կամ եվրոպական որևէ լեզվով կարդում է Հոմերոսին, Վիրգիլիոսին, Դանթեին, Լեսսինգին, Գյոթեին, Հերդերին, Ռուսսոյին ու շատ ուրիշներին: Ինչ վերաբերում է Շիլլերին, ապա կարելի է ասել, որ Արուստիսը նրան անգիր է իմացել: Այս իմաստով ուշագրավ է Արուստիսին ժամանակակից մի ֆրանսիացու կարծիքը, որ բերել է արևմտահայ հրապարակախոս Ստեփան Ռսկանը իր խմբագրած «Արևմուտք» պարբերականի 1859 թ. N 6-ում. «Գաղղիացի բարեկամ մա, որ Կովկասյան գավառներուն մեջ կճանապարհորդեր ասկե քանի մը տարի առաջ, կգրեր մեզ նամակի մը մեջ. «Պ. Արուստիսին հետ տեսությունների և ստուգիվ գարմացա իր հմտության վրա: Գերմանական փիլիսոփայության և գրականության տեսիլները իրեն այնքան բնառնի են, որ նույնիսկ եվրոպական մը օգուտ կրնա քաղել իր կարծիքներէն: Շիլլերը չուրի պես գիտե. Լեսսինգին, Լեյպնիսին կարծիքները մաղե անցուցեր է և իր ասիական երևակայությունով անոնց նոր դույն թր կուտա: Գերմանացիի մը չափ կխոսի գերմանիկ լեզուն և տարակույս չկա, որ այս անձը հայ գրագիտության պատիվ պիտի ընե. որ մը»: Անձանոթ ֆրանսիացին Արուստիսին բնութագրման մեջ ավելի է առաջ գնում, նա գարման-

բով նշում է. «Տարօրինակ երևույթ մարդկային լուսավորության. հայու մր բերան արձագանքն այնպիսի տեսիլներու, որք մեր մեջ դեռ նոր կտարածվեն: Շիլլերին, Լեսինգին գրությունները Կովկասի լեռներու մեջ կհաստատվին և լսելի կրլլան և դեռ Եվրոպայի մեջ ժողովուրդ կա, որ այս հեղինակներու անունը անգամ լսած չէ: Ջարմանալի բան պիտի ըլլա, եթե Լեսինգի լուսավորությունը Կովկասն սկսի և Բրոմելիին ժայռ տեսն իր շարժարանքին արդյունքը...»¹:

Եվ իսկապես, Աբովյանը Շիլլերի ձայնը լսելի է դարձնում Կովկասում, Գորպատում ձևաբերած իր հարուստ գիտելիքները ունեն կերպ աշխատում է սերմանել հայրենիքի երիտասարդ սերնդի մեջ: Թիֆլիսում հիմնադրած իր մասնավոր դպրոցում աշակերտներին դաստիարակում է ինչպես ուսուցիչների, նույնպես և Շիլլերի, Գյոթեի ստեղծագործություններով: Նա սեր է զարգացնում նրանց մեջ Շիլլերի նկատմամբ, ծանոթացնում է մեծ բանաստեղծի հայրենասիրական գաղափարներին: Գերմանացի ճանապարհորդ Մ. Վագները զարմանքով ու հիացմունքով է գրում նրա աշակերտների մասին: «Ստուգիվ՝ շատ զարմացա, գերմաներեն աղելի շեշտովով կիտակեն ու վարպետին իմ առջև գրել տված բաներն տեսա, որ գերմաներեն լեզվին կազմության աղելի տեղակի էին. իմ առջև Կեթեին ու Շիլլերին գործերը կարդացին»:

Աբովյանը իր Գորպատյան օրագրերում դանազան առիթներով հիշատակում է Շիլլերի աեուներ, խոսում նրա մասին: Նա բարձր է գնահատել Շիլլերի և Գյոթեի այնքան հազվագյուտ բարեկամությունը, որևորով էլ այդ բարեկամության մասին Այսպես, 1831 թ. դեկտեմբերի 9-ի չրանցումների շարքում մենք հանդիպում ենք Շիլլերի և Գյոթեի 1794—1805 թթ. նամակագրությունից հանված որոշ հատվածների թարգմանությունների, որոնք վերաբերում են երկու մեծ գրողների բարեկամությանն ու սիրուն: Գաղափար տալու համար բերենք մի նմուշ. «Յուրեմ մայիսի 1795 թ. Շիլլեր. «Ի՞նչ է լինում և ո՞չ անասնեմ ինչ, անտանելի է ինչ ալս, և անտուր՝ յոյժ»: Գոթա դարձուցանե զպատասխանի: «Միտե՛ք զիս միայն, այլ ալս չէ ինչ առանց պատճառի»: Ազնուականություն հոգու Շիլլերի. սրանչափ մանաւանդ ի թուղթն, որ առ Գոթա, ի՞նչ տեղին ուր ալ, ո՞րպիսի գրույց պանծալի՝ զոր խօսի նա. «Դուր ունիք կառավարել զթագավորութիւն մի (Գոթա միւնիստր) այլ ես, զսակաւ ինչ բարգաւաճ զերգաստան մի, զորս ցանկայի յամենայն սրտէ բազմացուցանել զայն իբրեւ զփոքր աշխարհ մի»:

Միայն այդպիսի գրառումներով չի սահմանափակվել Աբովյանի հետաքրքրությունը Շիլլերի նկատմամբ: Ինչպես ցույց է տալիս Աբովյանի օրագիրը, իր բարեկամների հետ նա հաճախակի գրույցներ է ունեցել Շիլլերի և նրա ստեղծագործությունների մասին: Հայտնի է, որ Աբովյանին շատ մոտ բարեկամ ընտանիքներից է եղել Բեհադել ֆոն Ադլերսկոնի, կամ, ինչպես Աբովյանն է ասում՝ Բեհադելի ընտանիքը: Աբովյանը Բեհադելին գիտեր գեղեսկ 1829 թվականից: Վերջինս մասնավորապես էր Պարրոտի արշավախմբին՝ Արարատի պագաթի բարձրանալիս: Ահա այս Բեհադելի մեծ քրոջ՝ Հելենի հետ է, որ նա գրույցներ է ունեցել Շիլլերի շուրջը: Աբովյանը այդ օրիորդի գիտելիքների մասին բարձր կարծիք է հայտնում, նրան անվանում է «բազմահանձար և գիտուն»: Աբովյանին զարմացրել են Շիլլերի ստեղծագործությունների մասին Հելենի արած գիտողությունները. «Ցայսմ գտանիմ, ի զարմանս, ի գտունն Հելենի զփիլիսոփայական բանս բանաստեղծին»:

Օրագրի գրառումներից երևում է, որ Շիլլերը անձամբ ծանոթ է եղել Հելենի հոր հետ և այդ հանգամանքը ավելի բան առիթ է սվել Աբովյանին հարցափորձ անել, գրույցներ ունենալ Շիլլերի մասին: Այդպիսի գրույցների արդյունք է օրագրի գրանցումներից մեկը: Շիլլերը և իր կին Լուտան Ենայում, 1791 թ. մի հանդիպման ժամանակ հրաժեշտի խոսք են գրել Հելենի հոր ծոցաւարում: Աբովյանը իմանալով այդ մասին շատ է ցանկացել ծանոթանալ Շիլլերի այդ հրաժեշտի խոսքին, թերևս և տեսնել այնքան սիրելի բանաստեղծի ինքնագիրը: Եվ ահա նա 1832 թ. հունիսի 1-ին իր օրագրում գրում է. «Չորեքշաբթի: Խնդրեցի ի սիրալի օրիորդին Հելենի զծոցագիր հոր իւրոյ, ուր երբեմն Շիլլեր մեծանուն բանաստեղծ գրեալ էր զբունս հրաժարման. նա ուրախութեամբ տուեալ ինձ զայն, ալ. «Ե գուց պարտիք պատրաստի, վասն ձեր գայսպիսի ծոցագիր»»: Աբովյանը ծանոթանալով բանաստեղծության հետ, արտագրում և գեղեցիկ է աչն իր օրագրում «Բանք Շիլլերի ի ձեռագրութենէ իւրմէ»՝ վերնագրի տակ:

¹ «Աշխատութե», Փարիզ, 1859, № 6, էջ 42:

² Նույն տեղում:

³ Ն. Աբովյան, Շիլլերի յիսկատար ժողովածու, հ. 6, էջ 59:

⁴ Նույն տեղում, էջ 189:

⁵ Նույն տեղում, էջ 190:

Նույն տեղում, էջ 190—191:

Արուվյանը շատ է սիրել Շիլլերի «An Emma» բանաստեղծությունը, որը երգվել է մեծ ժողովրդականություն է ունեցել իր ժամանակին: Նա սիրով է հիշատակում, թե ինչպես են իրենք խմբով երգել այդ երգը¹:

Հայ մեծ լուսավորչին մոտ են եղել Շիլլերի գաղափարները, անձնական-հասարակական տրամադրություններն ու ապրումները: Նա գրել է Շիլլերի թեմաներով և նրա տրամադրություններով չափածո երկեր. ինչպես օրինակ՝ «Լաուրա», «Սրիորգն ֆոն Շվանս ի վերայ էրգեհոնի» և այլ բանաստեղծություններ: Ոչ միայն այդ, Արուվյանը մեծ սիրով թարգմանել է Շիլլերի «Իդեալներ» բանաստեղծությունը, «Երաշխիք» և «Ասպետ Տոգենբուրգ» բալլադները, բայց որով վերջինս երկու: անգամ գրաբար և աշխարհարար: Նա փորձ է արել թարգմանելու և հայտնի «Ջանգալի երգը»:

Այնչափ է Շիլլերի ազդեցությունը Արուվյանի վրա: Նա իր դորպատյան բարեկամուհիներից մեկին ուղղած նամակում հենց այդպես էլ գրել է, որ եվրոպական գրողներից ամենից շատ ազդվել է Շիլլերից. «Եհարկե, օտարերկրյա ոչ մի գրող հենց սկզբից ինձ այնպես չի հրապույլել, ոչ մեկն այնպիսի մնայուն, անջնջելի ազդեցություն չի թողել ինձ վրա, ինչպես Շիլլերը: Եվ թե կա մեկը, որն իմ ապագա կյանքում հոգուս պահպանը, իմ առաջնորդն է լինելու, ապա դա պետք է նրա վեհ ոգին լինի»²:

Ինչպես երևում է, Արուվյանի վրա շատ ուժեղ տպավորություն է գործել Շիլլերի բալլադներից հատկապես «Երաշխիքը»: Հայտնի է, որ այդ բալլադի հիմնական մոտիվը բռնակալի վերածնունդի գաղափարն է: Շիլլերն իր այդ բալլադը գրելու համար օգտագործել է լատին հեղինակ Հիգինիուսի պատմվածքը: Բալլադում համարյա նույնությամբ վերարտադրված է պատմվածքի բովանդակությունը: Ըստ այդմ, երբ Սիցիլիան կառավարելիս է եղել դաժանագույն բռնակալ Դիոնիսիոսը, քաղաքացիներից մեկը՝ Դամոնը, մտադրվում է սպանել բռնակալին, սակայն չի հաջողում. նա ձերբակալվում է քերվում է բռնակալի մոտ: Վերջինս որոնում է Դամոնին անմիջապես մահվան դատապարտելու: Դամոնը խնդրում է երեք օր իրեն ժամանակ տալ՝ բոլոր հարսանիքը կատարելու և որպես պատանդ առաջարկում է բռնակալի մոտ թողնել իր քրեկները: Դիոնիսիոսը համաձայնվում է և ասում.

Ես քեզ կրտամ երեք օրն այդ քո խնդրած,
Բայց պայմանի եթե օրերն անցնեն,
Եվ ետ եկած չըլինես դու կրկին,
Նա, իմացի՛ր, քո փոխարեն կըմեռնի,
Իսկ քո պատիժն՝ այնուհետև կըներվի:

Քրոջ հարսանիքը կատարելուց հետո Դամոնը վերադառնում է, սակայն ճանապարհին մեծ խուլնդությունների է հանդիպում: Վերջիվերջո հաղթահարելով բոլոր տեսակի դժվարությունները, նա վերադառնում է այն բոլորին, երբ քնկերոջը տանում են մահապատժի վայրը: Հեռվից Դամոնը գոչում է դահճին.

...Ի՞նձ, ո՞վ դահճի՞, դու կախի՛ր,
Այստեղ եմ ես, իմ պատանդիս արձակիր:

Իմանալով այդ մասին, բռնակալը հրամայում է նրանց բերել իրեն մոտ:

Եվ սրանչափ արքան նայում երկուսին
Ու ասում է. «Հաղթությունը դուք տարար,
Դուք որ հիմա իմ սրտին էլ տիրացար.
Հավատարմությունն ահա չէ ցրնորր սին,
Եվ թե հավան կլինիք իմ աղերսին,
Ձեր մեջ նաև ինձ բարեկամ դուք առե՛ք—
Երկու էիք, այժմ լինենք մենք երեք»³:

Ըստ պատմվածքի՝ Դիոնիսիոսի խնդիրը Դամոնի և նրա քնկեր Ֆինտիասի կողմից մերժվում է, բայց Շիլլերի մոտ ինչպես տեսնում ենք, առարկություն չի հանդիպում և կարծես թե սկիզբ

¹ Խ. Արուվյան. Նշվ. աշխ., հ. 6, էջ 236:

² «Գրական թերթ», 1938, № 31, էջ 4:

³ Հովն. Հովհաննիսյան, Հատընտիր, Երևան, 1933, էջ 169—173:

է դրվում բռնակալի բարոյական վերածնությանը, որը սակայն իր դարդացումը չի ստացել բալլադում: Ինչ վերաբերում է բռնակալության գեմ սլաշքարի մոտիվին, ապա կարելի է ասել, որ այն հանդիսանում է միայն մի հանգույց, մի ներածություն մի ուրիշ, ավելի բարձր՝ փոխադարձ սիրո, բարեկամության մոտիվի, որը հապիւմ է անդամ մահվանը:

Ինչ խոսք, որ Արուսյանը այդ բալլադը պիտի սիրեր, նրա հիմնական մոտիվները՝ բռնակալության գեմ սլաշքարը և մանավանդ սիրո ու բարեկամության գաղափարը նրան խիստ հուզող հարցեր էին: Եվ ահա նա սկսում է թարգմտել բալլադը, սակայն թարգմանում է միայն առաջին 14 տողը և կանգ առնում: Ինչպես երևում է, նա գերադասում է այդ երկի նմանությանը կամ նրա հետևությանը դրել ինքնուրույն գործ իր ժողովրդի կյանքից: Եվ իսկապես, վերջերս հայտնաբերված «Նախաշաղկի» երկրորդ, համեմատաբար ավելի լրիվ օրինակում կա չափածո մի երկ՝ «Սեր, բարեկամություն» վերնագրով, որն ամբողջապես դրված է Շիրերի վերոհիշյալ բալլադի ազդեցության տակ կամ նրա հետևությանը: Այդ երկու երկի նմանությունը այնքան ակնառու է, որ անգամ կարծիք է հայտնվել, թե Արուսյանի՝ քերթվածը ուղղակի «վերամշակումն է» Շիրերի հիշյալ բալլադի: Սակայն, մեր կարծիքով, Արուսյանն օգտագործել է Շիրերի երկի միայն սյուժեական հենքը և հիմնական իդեան՝ բռնակալի վերածնությունը: Ըստ էության այն ինքնուրույն գործ է: Գործողությունը ամբողջապես փոխադրված է հայ իրականություն: «Սեր, բարեկամություն» բանաստեղծության թեման հանդիսանում է օտարի լծի տակ տառապող հայ ժողովուրդը, որին աղատագրելու է դուրս գալու՝ Արուսյանի սիրած հերոսը՝ հայտնի Աղասին:

«Երաշխիք» բալլադում Դամոնի հաստատականությունն ավելի ընդգծելու համար Շիրերը նրա վերադարձի դժվարությունները շատ ավելի է խտացրել, քան Հիգինիուսի պատմվածքումն է տրված: Արուսյանն ընդհակառակը, ընկերների փոխադարձ սերը, հավատարմությունը ու բարեկամությունն է, որ ավելի է շեշտել, նրանցից յուրաքանչյուրն անձնվիրաբար ցանկանում է, որ ընկերոջ փոխարեն ինքը մահվան դատապարտվի, մի բան, որ Շիրերի բալլադում այնքան էլ ակնհայտ չէ շեշտված: Այնուհետև՝ «Երաշխիք» բալլադում բռնակալի վերածնման մասին միայն ակնարկ կա, որը չի դարդացվել: Արուսյանի երկում խիստ կերպով ընդգծված է բռնակալի վերածնությունը: Արուսյանի բռնակալը ուխտ է կապում, երգվում է և ասում, թե թող իր սուրբ իր սիրտը մտնի, եթե աշուճեմե՞կ չսրահի, տիրություն չանի հայ ժողովրդին: Նա համոզված է, որ սիրո և բարեկամության միջոցով միայն իր մնացած կյանքը կզանա՞ղ գրախոս:

«Թո՛ղ էս թուրն, էս սուրն իմ սիրտս ցցվի,
Թե այսուհետև ես ամեն Հայի
Հերություն չանեմ, տերություն չանեմ:
Աստուծո մոտին սեներես ըլիմ:
Թար ըլի ինձ էլ էդ սրտովը սիրեք,
Ինձ էլ ձեր երրորդ բարեկամ շինեք.
Քաջասիրտ աղե՛րք՝ ձեր սիրո չափը
Կարե՛ց, կտրտեց իմ սրտիս կապը:
Երանի՛ հաղար էն աղամորդուն,
Որ իր սիրտն կտա պահ՝ ձեզ պես հոգուն,
Կացե՛ք իմ դռներ, իմ մնացած կյանքը
Կրդառնա ինձ նոր դրախտ, նո՛ր պարծանք:
Ասեց անիրավն, ընկավ նրանց ճտով,
Աստուծո մոտին ուխտ կապեց սիրով²»

Այսպես ուրեմն՝ մենք տեսնում ենք, որ հայ նոր դրականության հիմնադիր, մեծ լուսավորչ և աշխատող Արուսյանը եղել է ոչ միայն Շիրերի թարգմանիչը, այլև նրա գաղափարների համակիրը, հաստատողն ու տարածողը:

2

Շիրերի նկատմամբ ես Արուսյանի ունեցած ցեղով վերաբերմունքը ժառանգում եմ և մտու՞ղ դրողապաշաններու Սա. Նաղարյանը, Վ. Ասկարյանը, Քերովրե և Ռափայել Պատկանյանները, Գ. Բարխուդարյանը և ուրիշները մեր նոր, արեւելահայ դրականության արշալույսին տարվում են

¹ Խ. Արուսյան, Նշվ. տշխ., հ. 7, էջ 494:

² Նույն տ. առում, էջ 418 - 419:

գերմանական գրականության ռոմանտիկ ուղղությանը, գերազանցապես Շիլլերով: Նրանք ոգևորվում էին Շիլլերին, իրենց երկերում մեջբերումներ են կատարել նրա առեղծադրություններից, ոգեշնչվել են մեծ բանաստեղծի գաղափարներով:

Ստ. Նազարյանը «Հյուսիսափայլի» էջերում հոգվածներ է տպագրել Շիլլերի ու Գյոթեի նրանց ստեղծագործությունների մասին, նա մասնավորապես աշխատել է, որ Շիլլերի երկերը, նրանցում եղած առաջադիմական գաղափարները հայ ընթերցողների, հայ երիտասարդության սեփականությունը դառնան: «Հյուսիսափայլում» Ստ. Նազարյանը իր իսկ թարգմանություններն է տպագրել Շիլլերի երկու գրամատիկական երկը՝ «Մեխանական հարսը» և «Թուրանդոդը», ինչպես և մեծ դրամատուրգի տեսական հոգվածը թատրոնի մասին: Նա տպագրել է նաև, ինչպես իր, նույնպես և ուրիշների թարգմանությունները Շիլլերի բանաստեղծությունները:

1859 թվականին գերմանական և ամբողջ աշխարհի հասարակայնությունը նշեց Շիլլերի Կենդանի 100-ամյակը: Փոքրիկ հայ ժողովուրդը նույնպես մասնակցեց համաշխարհային այդ տոնին ի դեմս Ստ. Նազարյանի և նրա «Հյուսիսափայլի»:

Հայ գրական աշխարհում «Հյուսիսափայլն» էր, որ լայնորեն արձագանքեց նշանավոր այդ տոնին: Հորեկյանի կապակցությամբ ամսագրի էջերում, բացի Միք. Նալբանդյանի երկու նամակ-թղթակցություններից Ստ. Նազարյանը տպագրում է մի ընդարձակ հոգված «Գյոթե և Շիլլեր գերմանական բանաստեղծների զուգակից արձանքը Վեյմարի մեջ» վերնագրով², Հոգվածում Նազարյանը չափազանց բարձր է գնահատում Գյոթեի և Շիլլերի անձնական բարեկամությունը, նրանց տալիս է հասարակական խոշոր արժեք, նշում, որ նրանց անձնական բարեկամությունն ու համագործակցությունը մեծ նշանակություն է ունեցել գերմանական գրականության զարգացման համար. «Մի այլ ժամանակի թողունք,— ասում է Ստ. Նազարյանը,— այս երկու հոյակապ մարդերի վարքագրությունը, այժմ դարձուցանենք մեր ուշագրությունը այդ նազելի բարեկամության պսակի վերա, որ զուգավորել է միմյանց հետ երկու ամենամեծ գերմանացի բանաստեղծներ, որ ինչպես միասին կանգնած են հիշատակարձանի մեջ, նույնպես միասին կանգնած են եղել յուրյանց կյանքի ու ներգործականության ասպարեզի մեջ»:³ Չեռ-ձեռքի տված, սիրտ-սրտի՝ նրանք կարողացել են գերմանական ազգին տալ այն չնայնարհիվ վաստակը, որ միշտ կմեծարվի մարդկության կողմից. «Գյոթեն լինելու չէր Գյոթե առանց Շիլլերի. և ոչ Շիլլեր առանց Գյոթեի»,— եզրակացնում է Ստ. Նազարյանը³:

«Հյուսիսափայլի» խմբագիրը սովորություն է ունեցել յուրաքանչյուր տարվա տարեմուտին ամսագրի միջոցով զրուցել իր ընթերցողների հետ, նոր տարվա կապակցությամբ խորհրդածություններ անել իր «անարատ սրտով սիրած հայազգի հայրենակիցների» հետ, ցանկանալ նրանց առաջադիմություն, հաջողություն բաղաձայնելու մեջ և այլն: Այդ կարգի նյութերից է 1861 թվականի հունվարի ամսատետրում տպագրված հոգվածը՝ «Շիլլերի Մեխանական հարսը» խորագրով: Հոգվածն ըստ էության հանդիսանում է մի կողմից Նազարյանի տարեմուտային հերթական զրուցներից մեկը, մյուս կողմից՝ առաջաբան Շիլլերի հիշյալ գրամատիկական երկի հայերեն թարգմանության: Ամսագրի խմբագիրը հոգվածն սկսելով «Հառա՛ջ գնացե՛ք» խորագրի ունեցող քառատուն մի բանաստեղծությամբ, շարունակում է. «Հառա՛ջ գնացե՛ք, ի՛մ սիրելիք, հառա՛ջ, ձայն է տալիս մեզ ժամանակը»: Հայ ժողովուրդը չի կարող դադարեցնել ժամանակի ընթացքը, նա պետք է ուղեկից լինի նրան: Հայր շատ է ետ մնացել. երկու ճանաչարհ կա նրա առաջ, մեկը տանում է ետ՝ դեպի խավարը, ասիականությունը, կործանումը, մյուսը տանում է առաջ, դեպի լուսավորությունը, եվրոպական քաղաքակրթությունը — փրկությունը: Ստ. Նազարյանը ցավով է նշում, որ այդ երկու ուղղությունը մեր ժողովրդի մեջ ունեն իրենց կողմնակիցները, ըստ որում առաջին ուղղության հետևորդները՝ պահպանողականները, խավարամուլները, իրենց նշանարանն են դարձրել ժառանգական անշարժությունը՝ և կատաղի կերպով պայքարում են ազգային կյանքի վերաշինության, վերանորոգման գեղ, նրանք քարոզում են «վերադարձ դեպի անմիտ տղալահան օրերը»: Հայ ժողովրդի փրկությունը, ասում է Նազարյանը, եվրոպական քաղաքակրթության յուրացման մեջ է, որքան էլ ցանկալի չլինի խավարամուլներին, նրա առաջ պիտի բացվեն գիտություն գոյները, գրականությունը իր օգտակար գերը պիտի կատարի ժողովրդի լուսավորության գործում:

¹ Տե՛ս այդ մասին մեր՝ «Մի էջ հայ թատրոնի պատմությունից», Հայկ.ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1958, № 3, էջ 61—67:

² «Հյուսիսափայլ», 1859, № 10, էջ 821—828:

Նույն տեղում, էջ 822—823:

Որպես Լգրակացություն իր այդ բնդհանուր խորհրդածությունների խմբագիրը դիմում է իր սիրելի ազգակիցներին, հայտարարելով, որ այս խորհրդավոր օրը՝ տարեմուտին, ցանկանում է մեծարել նրանց «մի Լգրայրասիրական բնծալով», այս անգամ նվիրաբերելով «Շիլլեր գերմանական բանաստեղծի «Մեսինական հարսը, կամ Քշնամասեր Լգրարրը» դրամալի հայերեն թարգմանությունը։ Նկատի ունենալով ընթերցողների կողմից սպասվելիք պահանջը, Ստ. Նազարյանը որոշում է նախապես որոշ ծանոթություն տալ Շիլլերի մասին։ Կենսագրական հակիրճ տեղեկություններ տալուց հետո, նա համառոտակի ուրվագծում է բանաստեղծի անցած ստեղծագործական ուղին։

Շիլլերի մեծությունը Ստ. Նազարյանը գտնում է ոչ թե նրա ռեուլյուցիոն գաղափարների, այլ հասարակությունը բարոյական ճանապարհով վերափոխելու գաղափարի մեջ։ Այլ կերպ ասած, Ստ. Նազարյանը մեծ գոհունակությամբ շարունակում է. «Բայց հետո, երբ արտաքին հայտնուհի է, նա հրաժարվել էր իր ռեուլյուցիոն գաղափարներից և հասարակության փրկությունը գրտնում էր մարդու էսթետիկական, բարոյական գաստիարակություն մեջ։

Նշելով Շիլլերի ստեղծագործական կյանքի առաջին շրջանը, այն շրջանը, երբ բանաստեղծը ազատություն ձեռք բերելու համար քարոզում էր «պատերազմ բնդգեմ ամենայն բանի», Ստ. Նազարյանը մեծ գոհունակությամբ շարունակում է. «Բայց հետո, երբ արտաքին հայտնություն աշխարհը չէր այլևս երևում նորան մի անպայման թշնամի ներհակություն գաղափարական աշխարհի, երբ որ նա սորա մեջ ևս գտավ այն ճշմարտությունը, որ նա անդադար խնդրում էր և որոնում էր, այնուհետև շնչում են նորա բանաստեղծությունը խաղաղության հանդիստ և բացահայտում են ամենախորին հաշտություն իրողական և գաղափարական աշխարհի մեջ»։ Եվ ապա՝ «Մի մեծ, մի սուրբ բնավորություն միայն կարող էր ընտրել» այդ ճշմարիտ ճանապարհը և այդ տեսակետից «պարա է մեզ,— ասում է Նազարյանը,— ոչ թե միայն Շիլլերի բանաստեղծական հանճարի վերա գարմանալ, այլև հարգել Շիլլերը որպես սգնիվ ու պատվական Տարգման Պարզ ու հասկանալի է, որ նա իր խմբագրած պարբերականում պիտի տպագրեր «Մեսինական հարսը» կամ «Թուրանյոտը», բայց ոչ «Ավագակները» կամ «Մեր և խաղաղությանը»։

Ստ. Նազարյանը «Հյուսիսափայլը» գեղեցիկ իր հոգվածներում լայնորեն օգտվում է Շիլլերի մտքերից, աֆորիզմներից, Լեբեմն էլ հեղինակին շփոթելով, մեքերումներ է կատարում նրա երկերից, հենվում է նրա վրա որպես մեծ հեղինակության, բացի այդ, շատ հաճախ էլ իր աշխատություններին որպես բնաբան դնում է Շիլլերից հատվածներ կամ ամբողջական գործեր։

Սակայն էականն այն է, որ բոլոր դեպքերում Շիլլեր-էսթետին, Շիլլեր-ազատասերին և ոչ թե Շիլլեր-ռեուլյուցիոններին է նկատի առնում Ստ. Նազարյանը։ Այնուամենայնիվ, եղել է ժամանակ, երբ Նազարյանը ոգևորվել է բանաստեղծի «Վիլհելմ Տեյլ» դրամայի գաղափարներով։ Խոսելով Շիլլերի ստեղծագործությունների մասին, նա առանձնապես հիշատակում է «Վիլհելմ Տեյլը» և խոստանում է Շիլլերի պրամատիկական գրվածքների պատկեր հանդիսացող այդ երկը շուտով տալ «Ի վայելումն մեր ազգի գեղեցկասեր ընթերցողներին»։ Սակայն, ինչպես դիտենք, նրա այդ խոստումը այդպես էլ խոստում մնաց։

Հայտնի է, որ «Հյուսիսափայլը» անողոր պայքար էր մղում կղերա-ֆեոդալական գաղափարախոսության դեմ, հանուն հայ ժողովրդի լուսավորության, առաջադիմության։ Ուշագրավ է, որ ամսագրի խմբագրությունը շատ հաճախ իր այդ պայքարը տարել է Շիլլերի տված գեներրով։ Այդպիսի նմուշներից են ամսագրի 1859 թ. հիդերորդ համարում տպագրված «Շիլլերի մի րանի խոսքը» վերնագրով չափածո աղերքը, որտեղ բոտ էություն լուսավորության, առաջադիմության մասին բանաստեղծի գրած աֆորիզմներից կազմված հավաքածո են։ Այդ տողերի տակ որպես թարգմանիչ հիշված է Թեոդորոս Լալազարյանը ազգանունը։ Ահա այդ չափածո տողերը.

Դուր կամենում եք ետ տանել մեզ, և
Ձգել երկխայտկան անմիտ օրերի մեջ.
Զուր է ձեր կամակորությունը անցածի վերա,
Դուր կարող չեք ապագայի ոտքերը կոտրել։

Ունայն և անօգուտ վաստակ է
Դադարեցնել ժամանակի շարժման անիվը.
Առավոտը լուսանում է, հալածում է խավարը,
Եվ լուսապայծառ դուրս է գալիս արևի կառքը։

Դուք թեև ունիք աչք և ականջ, բայց կույր և խուլ,
Չկամիք լուել ձայներ, և ոչ տեսանել նշաններ,
Ես երկյուղի մեջ եմ ձեզ համար, թուլամիտ տիմարներ,

Այնուամենայնիվ հաստատ կրճնա աստուծո խորհուրդը,
Ժամանակի պտուղը կրճնանի յուր ժամանակին,
Եվ ինչ որ հարկավոր է ժամանակին, հստաջ կերթա:

Շիլլերի այդ խոսքերի թարգմանչի՝ Թեոդորոս Լալազարյանցի ով լինելը մեզ չհաջողվեց պարզել, ենթադրվում է, որ նա կարող է Լազարյան ճեմարանի սաներից լինել, թերևս և այդ անվան տակ թարգմած է ինքր խմբագիրը՝ Ստ. Նազարյանը: Համենայն դեպս, էթն աչդպիսի անձնավորություն գոյություն է ունեցել, ապա պետք է ասել, որ նա բավականին ակտիվորեն աշխատակցել է «Հյուսիսսփայլին»: Մասնավորապես ուշագրավ է այդ նույն՝ 1859 թվականի «Հյուսիսսփայլի» վերջին՝ դեկտեմբեր ամսվա համարում տպագրված նրա հոդվածը՝ «Աղջիկը և երիտասարդը» վերնագրով, որին բնաբան են բերված Շիլլերի հետևյալ տողերը.

Ո՛հ, հավիտյան թող մնան կանաչ
Նախկին սիրու ոսկի օրեր:

Ինչպես պարզվեց, հոդվածագիրը այս տողերը վերցրել է «Զանգակի երգից»: Հոդվածն սկսվում է. «Այսպես է երգում դերմանացոց ամենամեծ բանաստեղծ Շիլլերը, և այս մի քանի խոսքերի մեջ բացահայտել է նա այն բոլոր քաղցր ցավերը, որ աղջիկ մանկամարդի և երիտասարդի սրտում շարժվում են այն միջոցին, երբ սրտի զգացողությունը որպես մի ազատված լանտարնակ խնդության ձայն է արձակում և յուր հողեզմայություն, յուր ցնծալից ուրախություն մեջ կամեր գրկախառնել բոլոր աշխարհը»:

Մեծ է ևղել «Հյուսիսսփայլի» դերը հայ հասարակական մտքի, համազգային դրական լիզվի ու նոր գրականության զարգացման գործում: Մեր իրականության մեջ բացառիկ դեր կատարած այդ պարբերականը անցյալ դարի 50—60-ական թվականներին իր շուրջը համախմբելով ժամանակի լավագույն, առաջավոր ինտելիգենցիային, Ստ. Նազարյանի և հայ մեծ գեղարվեստի-դեմոկրատ Միք. Նալբանդյանի գլխավորությամբ համարձակ, տեսական ու ծրագրված պայքար է մղել ժողովրդի խավարամիտ տարրերի դեմ: Եվ շնայած այն բանին, որ տարիների ընթացքում նրա տարած պայքարը ունակցիայի դեմ ի վերջո հաղթանակով է պսակվում, այնուամենայնիվ նրա խմբագիրը 1864 թ. վերջերից պաղարեցրեց ամսագրի հրատարակությունը՝ բավարար չափով բաժանորդներ չունենալու պատճառով:

«Հյուսիսսփայլի» 1864 թվականի նոյեմբեր ամսվա համարի վերջում Ստ. Նազարյանը գետնում է Շիլլերի «Կասանդրա» բալլադի հայերեն իր թարգմանությունը, որին տալիս է «Վերջաբան Հյուսիսսփայլի» վերնագիրը: Բալլադի «Կասանդրա» վերնագիրը տվել է որպես ենթավերնագիր: Մեծ բանաստեղծի այդ նշանավոր բալլադի բովանդակությունը հետևյալն է. Տրոփադայի թագավոր Պրիամոսի և նրա կնոջ Հեկուբայի դուստր Կասանդրան Ապոլոնի տաճարում քրմուհի է և գուշակուհի: Նա տեսնում է իր հայրենիքի կործանումը, այդ մասին հայանում է բոլորին, լաց է լինում, գանգատվում է աստվածներին, սակայն ոչ որ նրան չի լսում, շուրջը անտարբերություն է, բոլորն արհամարհում են նրա վիշտը:

Եվ այդ մարդիկ հայհոյում են իմ ողբ ու լաց,
Արհամարհում ցավ և կսկիծ ճնշված սրտիս.
Դեպի անապատ սիրտի տունեմ, առանձնացած,
Իմ տանջված սիրտ, իմ վերավոր անհույս հոգիս:
Բախտավորից ես մերժված եմ. խնդացողին
Դարձա ես խաղ և նշավակ ծիծաղելի.
Ծանր վիճակ որոշեցիր դու ինձ բաժին,
Ով դու Պյության, դու չա՛ր աստված, զարհուրելի:

Նորից, ինչպես տեսնում ենք, Շիլլերի բերանով է, որ «Հյուսիսսփայլին» ու նրա խմբագիրը իրենց վերջին խոսքն են ասում ամսագրի ընթերցողներին:

3

Ինչպես հայտնի է, ռուս մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատները, այդ թվում հայ ակնաւոր ռևոլյուցիոն-դեմոկրատ Միք. Նալբանդյանը, բարձր են գնահատել Շիլլերին:

Միք. Նալբանդյանը իր երկերում հաճախ է խոսում Շիլլերի՝ որպես ազատության երգչի, ճշգրտ մարդկության բարեկամի մասին: Հայտնի է, որ վաղ շրջանում Միք. Նալբանդյանը դերազանցորեն իդեալիստ էր և այդ ժամանակ Շիլլերն ու Գյոթեն, Կանտը և Ֆիխտեն, ի թիվս այլոց, հանդիսանում էին նրա հոգեկոր ուսուցիչները: Հետագայում, երբ նա հեռանում է փիլիսոփայական իդեալիզմից և վճռական շրջադարձ է կատարում դեպի մատերիալիզմը, այնուամենայնիվ Շիլլերը նրա համար մնում է դարձյալ ազատության մեծ երգիչ:

Հայ մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատը 1861 թվականին դրած իր հռչակավոր «Երկու տող» պամֆլետում պատասխանելով ռեակցիոն-կղերական «Երեւակ» պարբերականի խմբագիր Զամուխյանի այն մեղադրանքին, որպես թե ինքը սոցիալիստ է, կարմիր հասարակապետական, Ռուսոյի հետևորդ, նրա գրույթներն ընդունող, գրում է, որ ոչ թե Ռուսոյի, այլ լոկ ճշմարտության հետևորդն է եղել ինքը, սակայն և այնպես «հարգել և պատվել հանճարը ուսած լինելով վաղուց,— ասում է Նալբանդյանը,— անունից երկյուղ չունինք, ո՛չ Ռուսոյի և ոչ Վոլթերի, այո՛, պարտական իսկ ենք մեծարել և՛ հանճարը, և՛ բանականությունը, այն աստվածային բուրանները, որոնցից առաջին անգամ դուրս թռան ազատության կայծերը: Այո՛, գիտենք հարգել ոչ միայն Ռուսոյի, Պրուդոնի, Ֆուրիեն և Ֆոխթեր, այլև Շիլլերը, Գյոթեն, Ֆիխտեն, Գանտը և Հեգելը, ճշգրտ մարդկության այն անմահ բարեկամը...»¹ Հայ մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատը իր համար երջանկություն և փառք է համարում լինել այդ բոլորի հետ, նրանց հետևորդը, մարդկության ազատության, իրավունքների, հավասարության համար մարտնչողը:

Մի ուրիշ տեղ՝ «Հեգելը և նորա ժամանակը» աշխատության մեջ, Նալբանդյանը քննադատելով Գերմանիայի այդ ժամանակվա վիճակը և «դերմանիկ ոգու» սահմանափակությունը, ցավով է նշում, որ մթի տակ է առնված Շիլլերի և մյուսների կերտած Գերմանիայի լուսակամարը. «երեսունից ավելի կտորներից բաղկացած նեղսիրտ և միմիայն ֆրանսիական մեծ հեղափոխության շնորհքով մի փոքր մարդ դարձած կառավարություններով,— ասում է Նալբանդյանը,— միացնում է այն լուսակամարը, որ կապել էին նորա վրա Գյոթեն, Շիլլերը, Լյութերը»²:

Նալբանդյանի համար Շիլլերը միայն ազատության մարտիկ չէ, նա միաժամանակ պոեզիայի գաղաթ է: Գյոթեն, Երսկիր, Շիլլեր—ահա այն հսկաները պոեզիայի բնագավառում, որոնց հաճախ է դիմել Նալբանդյանը: Բերենք մեկ օրինակ միայն. իր հայտնի «Աղ-դուր»-ի առաջաբանում մեծ դեմոկրատը ցատումով է խոսում հայ գրականության մեջ մուտք գործած այն համբավ բանաստեղծների մասին (Խ. Գալֆայան և ուրիշներ), որոնք արհեստական, բռնադրոսիկ տաղաչափությամբ ոտանավորների գրելով հանդերձ, հանդգնում են երևակալել իրենց մեծ բանաստեղծներ. «Քչե՛րր կան մեզ մոտ, թող թույլ տրվի հարցնել,— ասում է Նալբանդյանը,— որոնք մի անգամ արվեստակալ տաղաչափությամբ քամի են փչել և լրբությունը Երսկիրի կամ Շիլլերի հովերն են առնում...»³:

Միք. Նալբանդյանը ոչ միայն սիրել է Շիլլերին, ոչ միայն համակրել է մեծ բանաստեղծի ազատատենչ դադափարները, այլև նրա առանձին մտքերը, պատկերավոր արտահայտություններն ու դարձվածքները երբեմն մտցրել է իր աշխատությունների կոնտեքստների մեջ: Հստակապես փաստ է, թե Նալբանդյանը ինչպիսի մեծ խանդավառությամբ է ողջունել մեր նոր՝ ժամանակակից թատրոնի սկզբնավորումը ինչպես արևելահայության մեջ, նույնպես և արևմտահայ հատվածում: Հանդես գալով ժողովրդա-դեմոկրատական թատրոնի սկզբունքների պաշտպանությամբ նա իր «Աղգալին թատրոն Պոլսո մեջ» նշանավոր հոդվածում խոսում է թատրոնի բարոյական նշանակության, նրա կատարած մեծ դերի մասին, և ապա հանգում այն եզրակացության, որ թատրոնական բեմը հանդիսանում է այն ահեղ դատաստանը, որտեղ արդարությունը և հանցանքը, առանց աչառության, իրենց արժանի հասուցումն են ստանում: Այս նույն միտքը մենք հանդիպում ենք և Շիլլերի մոտ: Ինչպես երևում է, Նալբանդյանի տեսադաշտից չեն վրիպել Շիլլերի՝ թատրոնի մասին ունեցած տեսական աշխատությունները:

Կան ավելի ակնառու փաստեր: Նալբանդյանը սովորություն է ունեցել դրի առնել կարդացած գրքերում հանդիպած իրեն հետաքրքրող արտահայտությունները, պատկերավոր դարձվածք-

¹ Միք. Նալբանդյանի երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 17:

² Նույն տեղում, էջ 304:

³ Նույն տեղում, հ. 1, էջ 159:

ձերը: Նրա թղթերում հետքեր կան նման գրառումների, սակայն առանց աղբյուրների նշման: Այդ գրառումներից մի քանիսը, ինչպես պարզվեց, վերցված են Շիրլերի «Ավագակները» գրառաչից¹: Ըստ Լեռնայի Նալբանդյանը չիլերի այդ երկը կարդացել է ռուսերեն, սակայն գրառումները կատարել է հայերեն մի փոքր ազատ թարգմանությամբ: Այսպես, «Ավագակներ» գրամայից են գրաված հետևյալ արտահայտությունները:

Զորությունը աճում է, որքան աճում են կարիքը²:

Թեև բանալի և թռչել դեպի անմահության տաճարը³:

Անարգական սյուների վրա բարձրանալ մինչև փառքի կատարը⁴:

Հողիքը գրավ գրած սատանային՝ անունները մտածում են հանձնել աստղերին⁵:

Կրակով այրեցին նրա ույրական համբերությունը⁶:

Եվ ահա այդ արտահայտություններից մի քանիսը նալբանդյանը օգտագործել է իր «Հիշատակարանի» հետևյալ հատվածներում.

«Քանի՜ քանի անգամ ցավելու համար պատահել է մեզ տեսանել այնպիսի մարդիկ, որ անարգանք էին մարդկության, որ ցանկանում էին հասանել հերոսատրադիան պարծանքի և հիշատակի, որ մտածում էին խալտառակությամբ սանդուխների վերայով բարձրանալ մինչև անմահ փառքի սահմաններ... Այլ տեղ, մարդիկ, վաղուց ահա հողիք գրավ դրած սատանայի մոտ, մեռանելու ժամանակին յուրյանց անունը կտակում են աստղերին... Տեղ տեղ, բայց շատ փոքր. Երևում են այլ մարդիկ, որ հողիցած աստուծո շնչով և արձակած յուրյանց ձյունի պես սգի-տակ քնեցին, քոչում են դեպի անմահության տաճարը...»⁷ և այլն:

Միջախել նալբանդյանը արձագանքել է նաև մեծ բանաստեղծի ծննդյան 100-ամյակին: Այդ կապակցությամբ, ինչպես նշվեց, նա երկու նամակ-հոգված է դետեղել «Հյուսիսափայլի» 1859 թ. № 11-ում, որոնք ստորագրված են կեղծ անուններով: Դրանցից առաջինը թվագրված է «Պրոսպրա. Բեռլին, 9 նոյեմբերի 1859» և ստորագրված է Մարտիրոս Սառաֆյանց, Երկրորդը՝ «Ավուստրիա. Վիեննա, 9 նոյեմբերի 1859 թվականի», ստորագրված՝ Ադոլֆ Բլյումենթալ: Որ այդ նամակ-հոգվածները պատկանում են նալբանդյանի գրչին, ապացուցված է համարվում⁸: Այժմ արց է առաջ դալիս, թե ե՞րբ և ո՞րտեղ են գրված այդ հոգվածները: Ինչպես էնթերցողը կնկատի, թղթակցությունների թվականները համընկնում են, հետևապես և պետք է ընդունել, որ նալբանդյանը միևնույն օրը չէր կարող լինել և՛ Բեռլինում, և՛ Վիեննայում, և՛ մասնակցել հանդեսներին սկզբից մինչև վերջը: Ինչ խոսք, որ այդ հոգվածների թվականները հարմարեցված են նամակ-հոգվածներում նկարագրվող դեպքերին: Անշուշտ դրանք գրված են դեպքերից անմիջապես հետո, իսկ թե ե՞րբ և ո՞րտեղ, դժվար է կոնկրետ ասել: Ենթադրվում է, որ նալբանդյանը այդ հոգվածները կարող էր գրել Եվրոպա կատարած իր ճանապարհորդությունից վերադառնալու ընթացքում: Մի այլ ենթադրությամբ՝ քանի որ Շիրլերի ծննդյան 100-ամյակի տոնակատարության օրերին նալբանդյանը գտնվում էր Պետերբուրգում⁹, ապա պետք է ընդունել, որ այդ նամակ-հոգվածներն էլ գրվել են այնտեղ: Հավանորեն նա իր ուղի երկու նամակ-հոգվածները գրելիս օգտվել է օտար մամուլում տղադրված նյութերից, թերևս և դրանք ազատ թարգմանություններ են: Ժուռ-նայրստական նման պրիտմը խորթ չէր ժամանակի համար և, ինչպես հայտնի է, նալբանդյանը հաճախ էր օգտվում դրանից («Հիշատակարան» և այլն): Սակայն կարևորը այդ չէ: Ներկա գեղարվեստ ուղադրավն ու արժեքավորն այն է, թե նալբանդյանը ինչ վերաբերմունք ունի Շիրլերի նկատմամբ: Պետք է ասել, որ այդ նամակ-հոգվածներում ջերմությամբ և մեծ ակնածանքով է խոսվում Շիրլերի մասին և մանրամասնորեն նկարագրվում են Բեռլինում ու Վիեննայում տեղի ունեցած համաժողովրդական տոնակատարություններն ու հանդեսները:

¹ Մ. Նալբանդյան, նշմ. աշխ., հ. 4, էջ 303:

² Ֆ. Շիրլեր, Բնախի Երկեր, Երևան, 1952, էջ 51:

³ Նույն տեղում, էջ 53:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 59:

⁶ Նույն տեղում, էջ 60:

⁷ Մ. Նալբանդյան, նշմ. աշխ., հ. 1, էջ 385:

⁸ Մ. Նալբանդյան, Անտիպ Երկեր, էջ 301: Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, էջ 43—433:

⁹ Ա. Մ. Իսնիկյան, Միջախել Նալբանդյանի կյանքի և ստեղծագործության տարեգրությունը, Երևան, 1954, էջ 124—125:

«Երեկոյան օրին,— գրում է Նալբանդյանը Վիեննայում կատարված տոնախմբության մասին,— մենք կատարեցինք այս կայսերական մայրաքաղաքում մի տոնակատարություն, ինչպես բոլոր Գերմանիան մի երկրորդը տեսած չէ դեռևս: Թող մյուսները մանրամասնաբար նկարագրեն ձեզ այդ տոնակատարության միջոցով ինչ որ ինչը ինչը ինչը: Թույլ տվեցեք ինձ միայն հիշել այստեղ այն հոգեպայծառ, կախարհող տեսարանը, որ հառաջադրեց ի պատիվ գերմանական հոգեկից բանաստեղծի պատրաստած հանդեսը»¹: Այնուհետև Նալբանդյանը նկարագրում է, թե ինչպես ժողովրդի տարբեր խավերից, հասարակական կազմակերպություններից մոտ հինգ հազար մարդ ջահերով, գունավոր լապտերներով և դրոշակներով շրջում են քաղաքի գլխավոր փողոցները. մոտ քառորդ միլիոն բազմության մասնակցությամբ թափորը հասնում է Շիլլերի վիթխարի արձանի մոտ, որտեղ տեղի է ունենում մեծ հրավառություն և ավելի քան հազար «երգեցողք» սկսում են երգել Շիլլերի «Ուրախության վերա» հայտնի տաղը: Հայերիս կառույցի համառոտ, բայց իմաստալից ճառից հետո, երբ տոնախմբության հանդիսավորությունը հասնում է իր գագաթնակետին, այդ «միջոցին ահա տեսա ես մարդիկ,— ասում է Նալբանդյանը,— որ միմյանց անձանով, գրկախառնում էին միմյանց և օրհնաբանում էին այն պայծառացուցիչ և միավորող ոգին, որ յուր անմահ հոգու բարոյական գեղեցիկ ստեղծվածներով պատճառ էր տվել յուր թոռներին կատարելու մի այնպիսի շնաշխարհիկ տոնախմբություն: Նամակ-թղթակցության վերջում բերված են հանդեսում գիտնական Զելլերի և, ապա ավելի մանրամասն, Հ. Լաուրեի արտասանած ճառերը:

Միքայել Նալբանդյանը իր կյանքի վերջին տարիներին անգամ չի մոռանում Շիլլերին և անդրադառնում է նրան: Իր եղբայր Վազարու Նալբանդյանին 1863 թ. փետրվարի 20-ին բանտից գրած նամակում մեծ դառնությամբ վերհիշելով իր անցած ուսանողական տարիները, ընկերների հետ անցկացրած երջանիկ ու անհոգ օրերը, նա գրում է, որ եթե ինքը հանդիպեր Անտոն Սուլթանյանին, ուրիշ անգամ կասեր. «Հիշում ես անցյալը, երբ ջերմ ընկերական շփանում գիշերներ էինք լուսացնում. ո՛րք են այժմ մեր անատոմիա-պաթոլոգիական և ֆիզիկո-բժշկական հավաքությունը, գրքերը, տեսարանները, զբոլցները, և որպես այդ բոլորի անհրաժեշտ ատրիբուտներ՝ շշերն ու բաժակները»²: Եվ այստեղ Նալբանդյանը վկայակոչում է Շիլլերին և մեջբերում է անուամբ նրանից. «Ընդհատ է ասում Շիլլերը, թե «Կյանքի մայիսը մի անգամ է ծաղկում», անդառնալի են մեզ համար ավյունով ու հույսերով լի այն երջանիկ օրերը»³:

Լինելով ազատության երկրպագու, նոր կյանքի համար մարտնչող, Նալբանդյանը գոռի մեծություն էլ դռնում էր նրա ազատատենչ գաղափարների մեջ: Այսպես էր նա մոտեցել Բենթենին և Հայնեին: Նույն այդ մոտեցումն ունի նա և Շիլլերի նկատմամբ: Ի հակադրություն Ստ. Նադարյանի, Նալբանդյանը ազատության համար պայքարող Շիլլերին է, որ այդպե՛ս բարձր է գնահատել «Ավազակների» հեղինակ Շիլլեր-մարտիկը, Շիլլեր-սոցիալիստներն է. որ մոտ ու հարազատ է եղել Նալբանդյանի սրտին ու հոգուն:

4

Հայ գրողներից միայն վերոհիշյալները չեն, որ տարված են եղել Շիլլերով կամ կրել են նրա բարերար ազդեցությունը իրենց ստեղծագործությունների վրա: Ռուսահայ կլասիկ գրողներից շատերը ավել կամ պակաս չափով իրենց կյանքի տարբեր շրջաններում ոգևորվել են մեծ բանաստեղծի ստեղծագործություններով, տարվել են նրա գաղափարներով: Այդ շարքի գրողներից է անմահ Գաբրիել Սունդուկյանը: Հայտնի է, որ նրա դրամատուրգիան զարգացել է ռուս և եվրոպական մի շարք կլասիկ գրողների, այդ թվում և Շիլլերի ստեղծագործությունների բարերար մթնոլորտում: «Գոգոլ, Գրիբոեդով, Օստրովսկի, Մուխոմ, Շիլլեր, Գեյսպիր, Դյումա և շատ ուրիշները,— գրում է Սունդուկյանը 1898 թ. Յուրի Վեսելովսկուն,— անբաժան են ինձանից: Դրա համար էլ ես չեմ կարող գրականապես ասել, թե դրանցից ո՛րին եմ ես հատկապես պարտական իմ զարգացմամբ: Ինձ թվում է, նրանք բոլորն էլ ավել կամ պակաս չափով ներգործել են իմ մոտի և սրտի վրա»⁴: Այս բոլորով հանդերձ պիտի ասել, որ թատրոնի նկատ-

¹ «Հյուսիսայսիայի», 1859, № 11, էջ 903:

² Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, էջ 166:

³ Նույն տեղում, այս տողը վերցված է Շիլլերի 1784 թ. գրած «Հրաժարում» («Resignation») բանաստեղծությունից, որը վերաբերում է իր մոտերիմ ընկերուհի Շառլոտա ֆոն Կարբին: Չափածո այս երկը բանաստեղծի լավագույն ստեղծագործություններից է, որն ինչպես երևում է, շատ է սիրել Նալբանդյանը:

⁴ Վ. Սունդուկյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 463:

մամբ առաջին անգամ մեծ խանդավառություն ու սեր են առաջացրել և դեպի յապարհն են մղել ապագա դրամատուրգին Շիրիբի ստեղծագործությունները: Ահա թե ինչ էլ ասում այդ մասին ինքր Սունդուկյանը նույն այդ նամակում. «Այստեղ (Քիֆլիսում — Ա. Բ.) ուսական թատրոնի բացումից դեռ շատ առաջ, լինելով գեղես դիմագիշտում, մի անգամ, հիշում եմ ընթերցից հետո, կես գիշերին ես գրադվեցի Շիրիբի «Սեր և խարզավանք» ողբերգության ուսերեն թարգմանության ընթերցումով: Այդ պիեսը ինձ այնպես գրավեց և այնպիսի ուժեղ տպավորություն գործեց ինձ վրա, որ չնայած ուշ ժամանակին և մորս թախանձանքներին, ես չէի կարողանում գրից բաժանվել մինչև որ չվերջացրի այն (առավոտյան ժամը 4-ին), թափելով ջերմ արցունքներ: Այն ժամանակ ես 17—18 տարեկան էի: Որքան եղավ իմ ուրախությունը և ինչ ես ապրեցի 1846 թ. Պետերբուրգում, երբ ես առաջին անգամ տեսա Կարաուդիին Զեյդլանտի դերում: Ես սիրեցի թատրոնը և այդ ժամանակից ես բաց չեմ թողել ոչ մի հայտնի պիես, որ ներկայացվել է Ալեքսանդրյան թատրոնում...»: Սունդուկյանը իր այդ նամակում հայտնում է նույնպես, որ հետագայում նա նորից է տարվել Շիրիբով, նորից է կարդացել վեճ դրամատուրգին և ոգեշնչվելով՝ գրել իր հայտնի «Էլի մեկ զոհ» պիեսը:

Ուշագրավ և միաժամանակ բնական երևույթ դրական ստեղծագործության պատմության բնագավառում. ուսիսա Սունդուկյանի ինքնատիպ, վառ ազգային ու կենցաղային երանդ ունեցող դրամատիկական երկերի համար, սկզբնական շրջանում, ներշնչման աղբյուր են հանդիսացել Շիրիբի ստեղծագործությունները:

Մանկական և պատանեկան շրջանում Ռափայել Պատկանյանը նույնպես տարվել է Շիրիբով: «Մանկական հիշողություններ Մ. էմինի մասին» գրվածքում Պատկանյանը նշում է, թե ինչպես ի թիվ ալոց, Շիրիբը իր համար եղել է հեղինակություն, կարդացել է նրան, հավատացել է նրա մարտի դպցմունքներին և ուսումնասիրել է մասնավորապես նրա «ասացվածքի ձևը»¹: Հետագայում, 1851 թվականին, երբ Ռ. Պատկանյանը ուսանելու նպատակով գնում է Դոբրայտ, հնարավորություն է ունենում ավելի մոտիկից ծանոթանալու գերմանական գրականության հետ: Հայտնի է, որ Պատկանյանը այդտեղ է գրում այն ուսանողական երգերը, որոնք նույն նշանակությունն են ունենում հայերի համար. ինչ գերմանական ուսանողական միությունների համար իրենց ուսանողական երգերը: Անկասկած գերմանական գրականությունը, այդ թվում և Շիրիբի երկերը, Ռ. Պատկանյանի այդ ժամանակաշրջանի ստեղծագործությունների վրա իրենց ազդեցությունն են ունեցել:

Ռափայել Պատկանյանի գործաշատյան շրջանի դրական գործունեության շարունակության տրտահատություններից կարելի է համարել 1856 թվականին Պետերբուրգում լույս ընծայած «Սեզային երգարան հայոց» վերնագրով ժողովածուն: Այստեղ Պատկանյանը, բացի իր ստեղծագործություններից, գետեղել է նաև իր ժամանակվա բոլոր հայտնի երգերը, որոնք աչքի են ընկնում ժողովրդայնությամբ: Նրանց մի մասը նույնիսկ ձայնագրված է եվրոպական նոտաներով: Իր առաջաբանում Պատկանյանը նշում է, որ երգի մեջ բացահայտվում է ժողովրդի կյանքը, նրա սոցիալական կեցությունը: Անվանի բանաստեղծը անշուշտ հասկանում էր, թե որքան կրթիչ և ազնվացնող նշանակություն ունի երգը ժողովրդի համար առհասարակ: Հրատարակելով իր երգարանը, նա նպատակ ուներ ժողովրդի ձևերը տալ երգերի մի հավաքածու, որը կնպաստեր նրա կրթության զարգացմանը և ազնվացմանը: Ուշագրավ է, որ բանաստեղծը ընկելով իր այդ հիմնական նպատակագրումից՝ երգարանի համար նշանաբան է ընտրում Շիրիբի հայտնի խոսքերը՝ «Ջար մարդիկ երգ չունեն», որոնք տպագրված են տիտղոսաթերթի վրա:

Շատ ավելի ուշ Պատկանյանը վերստին անդրադարձել է հիշյալ թեմային՝ երգի կրթիչ, ազնվացնող, հոգեպարար նշանակությանը: Նշված երգարանը լույս ընծայելուց քսան տարի հետո, 1876 թվականին նա գրել է մի բանաստեղծություն «Երգ» անունով, որ և նվիրել է իր սիրելի բարեկամ Փիլիպոս Վարդանյանին: Երբ ձախորդության, տրտմության մեջ ես, ասված է այդ բանաստեղծության մեջ, ձեռքդ վերցրու ազգային երգարանը և երգի ազդի դասը, երգիր անդադար և դու հոգով, մտքով կհանգստանաս: Երբ հաջողության, ցնծության մեջ ես՝ նոսրից երգիր: Երգիր խնջույքի մեջ, երգիր բանտում, երգիր կովի, ճակատամարտի մեջ, երգիր ամենաբուժիչ է, երգիր հանգստացնող է, նա մարդու ամենաթանկագին գանձերից մեկն է: Եվ չսփածո այս երկը ավարտում է նորից Շիրիբի վերահիշյալ խոսքերով:

Երգով հիշն՝ մեր նախնայաց,

Երգով թո՛ղ քնն որդին,

¹ Ռ. Պատկանյան, Երկեր, Երևան, 1935, էջ 586:

Երգն է մարդուն անգին դանձ,—
 Լոկ շառ մարդիկ երգ շունին՝

Շիլլերի ստեղծագործությունները հափշտակությանը կարգացել և դրանցով ոգևորվել է նաև հայ խոշորագույն կլասիկ Րաֆֆին։ Մեծահռչակ վիպասանի մասին ողու գրականագիտուհի Ե. Նեկրասովան իր ժամանակին ասել է, որ Րաֆֆին «շատ սիրում էր Հոմերոսին և անգիր գիտեր «Իլիականից» և «Ոդիսականից» շատ հագներգություններ։ Նա ծանոթանում է նույնպես Վիկտոր Հյուգոյի, Ժորժ Զանդի, Հայնեի և Շիլլերի երկասիրություններին։ Շատ լավ գիտեր բուսաց գրականությունը սկսած Պուշկինից...»²

Րաֆֆու համար Շիլլերը, Գյոթեն, Շեքսպիրը գրականության հսկաներ են եղել, կատարելություններ։ Այդ միտքն արծարծել է նա «Փունջի» առաջաբանում։ Մեղադրելով հայ գրողներին, որ մտավոր սնունդ չեն տալիս ընթերցող հասարակությանը, որ չկան զեղարվեստական լիարժեք գրքեր, որոնց պահանջը խիստ կերպով զգացվում է, հարկադրված ինքր համարձակվում է հրատարակել ավելի քան քսան տարվա իր գրվածքները, թեկուզ և նրանք չփայլեն իրենց զեղարվեստական արժեքով։ Րաֆֆին իր այդ քայլը համարում է հանդգնություն, բայց նա չի վախենում դրանից, համոզմունք է հայտնում, որ միշտ պատերազմողների առաջին շարքերը ընկնում են։ Եվ ապա ավելացնում է. «Եթե մի օր հայաց հողի վրա կծնվեն Գյոթեններ, Շիլլերներ և Շեքսպիրներ, թող նորա մեզ նման անձնավատահների ավերակների վրա բարձրացնեն յուրյանց զեղեցիկ ու հսկայական շինվածքը»³։

Րաֆֆին իր աշխատություններում երբեմն մեջբերումներ է կատարել Շիլլերից կամ վկայակոչել է նրան։ «Փունջի» առաջին հատորում զետեղած «Ուր է իմ հայրենիքը» վերնագրով բանաստեղծությանը, որը վերաբերում է ի վերջո հայրենիքում հանգիստ գտնող տարագիր հային, որպես բնարան Րաֆֆին բերել է Շիլլերի խոսքերը.

Հայրենիքին, քո սիրելի հայրենիքին
 եղիր դու կից.
 Այնտեղ են քո գործության բուն արմատները։

Ցույց տալու համար, որ իր «Կաթերի» քննադատ, պահպանողական Հայկունին խորը սխալների մեջ է, որ գրողը պատմական անձնավորություն կերտելիս կարող է որոշ ազատություն տալ իրեն, Րաֆֆին վկայակոչում է Շիլլերին և նշում է, թե նրա Դոն Կարլոսը նման չէ պատմական Դոն Կարլոսին։ Միջանկյալ նկատենք, որ Րաֆֆին իր այդ փաստարկումը բերելիս հենվել է պատմական գրամալի մասին Բելինսկու արտահայտած հայտնի կարծիքի վրա, առանց, սակայն, մեծ քննադատի անունը հիշատակելու։ Մուրացանը նույնպես այդ կարծիքն է բացառել իր «Ռուզան» պատմական գրամալի կապակցությամբ Լեոյի հետ ունեցած բանավեճում։ Ահա Բելինսկու տեսակետը պատմական անձի զեղարվեստական կերպարի մասին. «Երբեմն արվեստագետը (մանավանդ երբ նրա տաղանդը սուրբկերպով է), ունի կատարյալ իրավունք եղծանել պատմությունը իր պատմական գրամալի մեջ, առնելով այն (պատմությունը) միայն իբրև շրջանակ իր գաղափարի համար։ Շիլլերի Փիլիպոսն ու Դոն Կարլոսը ոչնչով նման չեն պատմական Փիլիպոսին և Դոն Կարլոսին, բայց լինելով անհավատարիմ պատմական ճշտության, նրանք վերին աստիճանի հավատարիմ են մարդկային հոգու, մարդկային սրտի հավիտենական ճշմարտությանը, հավատարիմ են բանաստեղծական ճշմարտությանը, որովհետև մտացածին չեն, նարովի չեն, այլ ծնվում են իրենց իրենց...»⁴։

Թե որքան մոտ են եղել Շիլլերի ստեղծագործությունները Րաֆֆու սրտին, երևում է նաև այն փաստից, որ անվանի վիպասանը նույնիսկ սկսում է թարգմանել Շիլլերին հայերեն։ Ավելին. մեր կարծիքով Շիլլերի ազատասիրական գաղափարները որոշակի դեր են կատարել Րաֆֆու ստեղծագործական կյանքում ևս։ Այս տեսակետից Շիլլերի ազդեցությունը նկատելի է մեծ գրողի երկերի, մասնավորապես «Ջալալեդդինի» վրա։ Այս երկում նույնպես քննադատության են ենթարկված ֆեոդալական-բռնապետական կարգերը, նրանց բարբարոսական բնույթը, որն ստեղ-

¹ «Ռ. Պատկանյանի բնտիկ երկասիրությունները», հ. 1, Պետերբուրգ, 1893, էջ 138 (ընդգծումը մերն է—Ա. Բ.)։

² «Ժողովածու» (Հոգևոր ողու սովորություններ), Մոսկվա, 1892, էջ 243—244։

³ Րաֆֆի, Փունջ, հ. 1, Թիֆլիս, 1874, էջ 1X։

⁴ В. Г. Белинский, Собр. соч. в 3 томах, т. I, М., 1948, էջ 233։

ծում է հասարակական շարիքներ: «Ջալալեդդինի» հերոս Սարհատի և Շիլլերի «Ավազակների» Կարլ Մոորի գաղափարների մեջ որոշ ընդհանրություններ կան: Սարհատը Կարլ Մոորի նման նույնպես հեռանում է հայրենական տնից և դառնում գաղափարական ավազակ, պայքարում է բռնապետության և հասարակական շարիքի դեմ: Այսուհանդերձ չի կարելի ասել, թե Սարհատը նույն Կարլ Մոորն է, որ գործում է հայկական պայմաններում, ինչպես աշխատել է իր ժամանակին ապացուցիչ գրականագետ Ս. Մանուկյանը¹: Ըստ Մանուկյանի, Սարհատը Կարլ Մոորի հայկական վարիանտն է, Բաֆֆին մեխանիկորեն պատճենավորել է Շիլլերի հերոսին: Սարհատի և Կարլի գաղափարների մեջ, ինչպես ասացինք, ճիշտ է, որոշ ընդհանրություններ կան, սակայն դրանք տարբեր մարդիկ են, տարբեր ձգտումներով: Մեկը պայքարում է իր ժողովուրդը օտարի բռնակալական լծից ազատագրելու համար, մյուսը մարտնչում է սոցիալական անարդարությունների դեմ առհասարակ:

Շիլլերի գաղափարների ազդեցությունը զգացվում է նաև «Խենթի», հեռավոր չափով՝ «Կայծերի» վրա:

Գերմանական մեծ բանաստեղծի հայրենասիրական գաղափարները իրենց որոշ ազդեցությունն են ունեցել Մերենցի ստեղծագործությունների, մասնավորապես նրա «Երկունք Թ գարուն» պատմական վրա: Մերենցի Հեղինեն Շիլլերի Եղիսաբեթի նման սողորված է հայրենասիրական բարձր գաղափարներով: Նա Գուրդեն Արծրունու նկատմամբ տածած իր բուռն գորովը պատրաստ է զոհարել ժողովրդի, հայրենիքի նկատմամբ ունեցած սիրույն, ճիշտ այնպես, ինչպես Եղիսաբեթն է վարվում Դոն Կարլոսի հետ:

Յուրի Վեսելովսկուն դրած իր պատասխան նամակում Լևոն Հայտնի է, որ եվրոպական գրողներից նրա ճաշակի և իդեալների մշակման վրա ամենից շատ ազդել են Շեքսպիրը, Կիլլեր, Գյոթեն և կրկին Վիկտոր Հյուգոն: Համարյա նույնն են ասել Շիրվանզադեն, Լևոն Մանուկյանը: Մասնավորապես վերջինս Վեսելովսկուն ուղղած իր պատասխան նամակում իմիջիպես խոստ էր այն ազդեցության մասին, որ նրա վրա թողել են արևմտաեվրոպական գրողները, այդ թվում և Շիլլերը: Մանվելյանը հայտնում է, որ գերմանական մեծ բանաստեղծին նա մեծ ոգևորությամբ կարդացել է դեռևս վաղ հասակում: Չմոռանանք նշել, որ հետագայում Մանվելյանը Շիլլերի երկերի հայերեն թարգմանությունների բնագավառում որոշ տեղ է գրավում:

Հայ կլասիկ գրողներ Հովհ. Հովհաննիսյանը, Հովհ. Թումանյանը, Դ. Դեմիրճյանը նույնպես ոգևորվել են գերմանական մեծ բանաստեղծով: Հովհ. Հովհաննիսյանը դեռևս աշակերտական նստարանից սկսած, Լազարյան ճեմարանում սովորելու տարիներին, տարված է եղել Շիլլերով: Նա այդ շրջանում փորձեր է արել թարգմանելու գերմանական բանաստեղծին: Ծննդավայրի սան Հովհաննիսյանի բանաստեղծությունների տետրում կան Շիլլերի երկու բանաստեղծությունների թարգմանություններ:

Շիլլերի ստեղծագործություններից կատարած գոտորիկ թարգմանություններ ունի և Հովհ. Թումանյանը: Ինչ վերաբերում է Ավ. Իսահակյանին և Դ. Դեմիրճյանին, ապա պիտի ասել, որ պատանեկան հասակում նրանցից առաջինը ավելի տարված է եղել Գյոթեով, իսկ Դ. Դեմիրճյանը՝ Շիլլերով: Այդ ժամանակ Դ. Դեմիրճյանը իրեն Շիլլեր է երևակայել: Ավ. Իսահակյանին նվիրած իր մի բանաստեղծության մեջ Դեմիրճյանը հենց այդպես էլ ասում է.

Ա՛խ ինչ լավ էր, հրաշալի—
Երկուսս էլ վես պատանի՝
Դու քեզ հաշվող մի Գյոթե
Նս էլ Շիլլեր իբրև թիշ²:

Շիլլերին թարգմանել են Ալիշանը, Ղ. Աղայանը: Գերմանական մեծ բանաստեղծին թարգմանել են նաև ուրիշ շատ հայ գրողներ ու թարգմանիչներ, սակայն դրանց շարքում առանձնահատուկ տեղ է գրավում դորպատյան «Գրողների» դուրս եկած և մինչև իր կյանքի վերջը նրա ավանդներին հավատարիմ մնացած բանաստեղծ Գևորգ Բարխուդարյանը:

Շիլլերի բոլոր հայ թարգմանիչներից և ոչ մեկի աշխատանքը դրական և հասարակական իմաստով չի կարող համեմատվել Բարխուդարյանի կատարածի հետ: Նրա գրական և թարգմանական գործունեությունը արդյունք էր իր ժամանակաշրջանի, և այդ տեսակետից Շիլլերին հայերեն խոսեցնելու, նրա մտքերն ու գաղափարները հայ ժողովրդի լայն զանգվածների սեփա-

¹ Ս. Մանուկյան, Բաֆֆի «Ջալալեդդինի» ծագումը, Երևան, 1932:

² «Ինքնագրված», Թիֆլիս, 1917, № 6, էջ 145:

կանոթյունը դարձնելու ասպարեզում Բարխուդարյանը չի խնայել ոչ մի ջանք, մեծ կրթոթություն և եռանդ է հանդես բերել այդ գործում: Նա իր գրական-ստեղծագործական կյանքի մեծ մասը նվիրաբերել է այդ վեհ նպատակին:

Մեծ է եղել Բարխուդարյանի վաստակը Շիլլերի ստեղծագործությունների, մասնավորապես նրա դրամատիկական երկերի հայերեն թարգմանությունների բնագավառում: Բացի բանաստեղծություններից նա թարգմանել է մեծ գրողի ազատաբաղձ, հալոենասիրական բնույթի համարյա բոլոր դրամատիկական երկերը՝ «Վիլհելմ Տելլը», «Դոն Կարլոսը», «Օթլենի կույսը», «Ֆիեսկոյի դավադրությունը Ջենովայում», ինչպես նաև «Մարիա Ստյուարտը»: Բարխուդարյանի շնորհիվ է, որ Շիլլերը բնական է դարձել հայ գրականության համար, նրա շնորհիվ է, որ հայ ժողովուրդը սիրել է դերմտնական բանաստեղծին ինչպես հարազատի: Նրան կոչել են «Շիլլերի թարգման», «անմահ Շիլլերի հայերիս համար անմահ թարգմանիչ» և այլն:

Մեծ բանաստեղծի ու դրամատուրգի երկերից կատարված հայ գրողների, հատկապես Բարխուդարյանի, թարգմանությունները ոչ միայն ընդլայնել են մեր գրականության շրջանակները, հարստացրել են հայ գրականությունը համաշխարհային կլասիկի մեծարժեք գործերով, այլև հայ ժողովրդի պատմական զարգացման համապատասխան փուլերում համարժեք են եղել մեր ազգային առաջավոր գրականությանը և ալդ իմաստով մեր գրական ու հասարակական կյանքում կատարել են արժեքավոր և օգտակար դեր:

Կարելի է խոսել և ուրիշ հայ գրողների մասին, ցույց տալ նրանց վերաբերմունքը մեծ բանաստեղծի, նրա անհնահատելի ստեղծագործությունների վերաբերյալ, սակայն, կարծում ենք, որ բերվածն էլ բավական է գաղափար տալու, թե Ֆրիդրիխ Շիլլերը որքան բարձր է գնահատվել մեզ մոտ, ու նրա ստեղծագործությունները ինչպիսի ազդեցություն են ունեցել առանձին հայ գրողների ճաշակի, բնդհանրապես հայ գրականության և հայ թատրոնի զարգացման վրա:

ШИЛЛЕР И АРМЯНСКИЕ ПИСАТЕЛИ XIX ВЕКА

А. С. БАБАЯН

(Р е з ю м е)

Великий сын немецкого народа Фридрих Шиллер является одним из тех любимых европейских классиков, произведения которого сыграли значительную роль в армянской литературной и общественной жизни. Армянские писатели вдохновлялись Шиллером, его произведения имели благотворное влияние на развитие армянской литературы, оригинальной драматургии и национального театра. Сочинения великого поэта получили широкое распространение в народе.

Шиллер проник в армянскую литературу еще на заре становления новой армянской литературы. Хачатур Абовян первым оценил гений поэта, начал переводить Шиллера на армянский язык и явился первым распространителем его свободолобных идей в армянской действительности. Великому армянскому просветителю были близки идеи Шиллера, произведения его имели определенное влияние на Абовяна.

Ст. Назарян, В. Аскарян, Б. Патканян, Р. Патканян, Г. Бархударян и другие в период возникновения новой армянской литературы восточных армян серьезно увлекались немецким романтизмом, в особенности Шиллером. Все они с большим вдохновением переводили Шиллера, цитировали его в своих литературных трудах.

Ст. Назарян всячески стремился к тому, чтобы произведения Шиллера, его прогрессивные идеи стали достоянием армянской молодежи. В борьбе с клерикально-феодалной идеологией на страницах своего журнала Ст. Назарян очень часто использовал оружие Шиллера. Однако Ст. Назарян ценил Шиллера не за его революционные идеи, а за те идеи, которые могли бы перестроить общество путем нравственного просвещения.

Пламенный борец за свободу, великий революционный демократ Микаел Налбандян величие писателя находил в его свободолобных идеях. Таким было его отношение к

Беранже и Гейне, таково же было его отношение и к Шиллеру. В отличие от Ст. Назаряна, М. Налбандян высоко ценил боровшегося за свободу Шиллера. Шиллер-революционер, автор «Разбойников» был близок сердцу Налбандяна.

Шиллер был первым, который пробудил у великого армянского драматурга Г. Сундукяна любовь к театру. С большим увлечением читал произведения Шиллера и армянский классик Раффи. Между идеями немецкого поэта и армянского писателя имеются общности, что особенно заметно в «Джалаледдине» Раффи. Шиллера читали, переводили и увлекались им Ов. Ованнисян, Ов. Туманян, Л. Манвелян, вдохновлялись Шиллером Церенц, Лео, Ширванзаде, Демирчян и многие другие армянские писатели.

Произведения Шиллера переводили также армянские классики Алишан, Г. Агаян. Великого немецкого поэта переводили и другие армянские писатели и переводчики. Среди этих переводчиков особое место занимает поэт Г. Бархударян.